

ԱՐՄԻՆԻՅԱ ԱՐԱԲԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԻ ՈՒ ՆՐԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԻԱԿՈՐՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՄՕՏԱԻՈՐ ԹՈՒԱՔԱՆԱԿԸ՝

ԱՐՄԵՆ ՇԱՀԻՆԵԱՆ

a_shaginyan@mail.ru

Թ.-Ժ. դարերի արաբագիր առաջին պատմիչների ու աշխարհագիր-ների տեղեկությունների հիման վրայ մեզ յաջողուել է ցույց տալ, որ 701-ին Մեծ Հայքի, Վիրքի եւ Ադուանքի նուաճուած տարածքներից ձեւաւորուած արաբական Արմինիյա նահանգը (أرمينية) բաղկացած էր ոչ թէ չորս վարչական միաւորներից՝ ինչպէս ընդունուած էր գիտական գրականութիւնում, այլ՝ երեք²։

Արմինիյա Ա., Դուին-Դարիլ կենտրոնով, որն ընդգրկում էր պատմական Մեծ Հայքի 113 գաւառները 144,603 քառ. կլմ. ընդհանուր տարածքով։ Արմինիյա Բ., նոյնիսկ Առանը Պարտաւ-Բարդաւա՛ւ կենտրոնով, եւ Արմինիյա Գ., նոյնիսկ Ջուրգանը Թրիլիսի-Թիֆլիս կենտրոնով։

Ադուանքի սահմանները արաբական իշխանութեան օրօք ընդլայնուեցին Մեծ Հայքի Միւսեաց աշխարհի (15,237 քառ. կլմ.) հաշուին։ Այսինքն՝ Առանի տարածքը հաւասարուեց 87,441 քառ. կլմ., նախկին իրանական նոյնանուն մարզպանութեան 72,204 քառ. կլմ. տարածքի փոխարէն, որն ընդգրկում էր Մեծ Հայքի Արցախ եւ Ուտիք աշխարհները, մէկ էլ Փայտակարան աշխարհի Հրաքոտ-Պերոժ գաւառը։ Վիրքի սահմաններն ընդլայնուել էին դեռ Է. դարի վերջին լազական Էզր(իսի) շրջանի (1976 քառ. կլմ.) հաշուին։ Այսինքն Ջուրգանի տարածքը հաւասարուեց 38,988 քառ. կլմ., նախկին իրանական Վրաց մարզպանութեան (Վարջանի) 37,012 քառ. կլմ. տարածքի փոխարէն, որն ընդգրկում էր Մեծ Հայքի Գուգարք աշխարհը³։

Արմինիյայի ու նրա երեք վարչական միաւորների բնակչութեան մօտաւոր թուաքանակը վերականգնելու համար հետազոտողին հարկաւոր է ուշադրութիւն դարձնել արաբական իշխանութիւնների կողմից պաշտօնապէս հաստատուած հարկային դրոյքաչափերին։ Մահմեդական իրաւունքը՝ *շարիաթը* (شرعية), ընդունում էր պետական հարկերի հինգ տեսակ, որոնցից միայն երկուսը՝ հողահարկն (خراج, *խարաջ*) ու այլադաւան բնակչութիւնից գանձուող գլխահարկը (جزيه, *ջիզիա*) լայն կիրառում գտան մեզ հետաքրքրող Արմինիյայում⁴։

Ումայյեան Հարստութեան (661-750) առաջին խալիֆների օրօք հարկերը արդէն գանձուում էին դրամական կանխիկ ձեւով, սակայն բնահարկը գերակշռողն էր։ Բացի այդ, հողահարկն ու գլխահարկը՝ երկու կարեւորագոյն պետական հարկերը, իրարից չէին առանձնացուում. դի-

տարկում էին որպես միացեալ պետական տուրք, որը ենթակայ էր գանձման՝ խալիֆայութեան բացառապէս այլադաւան բնակչութիւնից⁵: Սակայն, երբ Մեծ Հայքի, Վիրքի ու Աղուանքի նուաճուած տարածքներից Ումայեան իշխանութիւնները վերջնականապէս ձեւաորեցին միացեալ Արմինիյա նահանգը, Արաբական գերտէրութիւնում արդէն տեղի էին ունեցել 'Աբդ Ալ-Մալիք խալիֆայի (685-705) յայտնի բարեփոխումները, որոնք ընդգրկեցին նաեւ հարկային դաշտը⁶:

Այսուհետեւ ինչպէս հետեւում է Ասորի Յակոբիկեան Եկեղեցու կաթողիկոս-պատրիարք Դիոնիսիոս Ա. Թէլ-Մահարցուն (817-845) սխալմամբ վերագրուող *Ժամանակագրութիւնից*, *ջիզհան* վերջնականապէս տարանջատուեց *խարաջից*, եւ միայն դա պահպանեց այլադաւան բնակչութիւնից գանձուող պետական տուրքի կարգավիճակը⁷:

Արաբագիր իրաւագէտ, խալիֆայութեան գերագոյն դատաւոր Աբու Եուսուֆի (731-798) *کتاب الخراج* (Հողահարկի մասին գրք)ից հետեւում է, որ *ջիզհան* գանձում էր տարին մէկ անգամ բոլոր այլադաւաններից, բացառութեամբ կանանց, երեխաներից ու ծերերից: Ոչ-մահմեդականներից այսպիսի հարկային անձեռնմխելիութիւնից օգտւում էին նաեւ հոգեւորականները, աղքատ ու հաշմանդամ տղամարդիկ, որոնք զրկուած էին սեփական եկամուտի աղբիւրից եւ գոյատեւում էին՝ զբաղուելով մուրացկանութեամբ⁸: Այնպէս որ հարկման ենթակայ էին միայն աշխատունակ, աշխատանքով ու եկամուտով ապահովուած տղամարդիկ, իսկ հարկային դրոյքաչափը այդպիսի հարկատուի համար կախուած էր նրա դրամական վիճակից, աւելի ճիշտ՝ եկամուտից: Դրա վառ ապացոյցն է հեղինակաւոր իրաւագէտի հետեւեալ սահմանումը. «...*արհեստատրներից ու առետորականներից ըստ նրանց արհեստի կամ առետրի կը գանձուի 48 դիրհէմ հարուստներից եւ 24 դիրհէմ՝ միջին կարողութեան տեր մարդկանցից: [Հետեւաբար] ում որ արհեստը հնարատրութիւն է տալիս վճարել 48 դիրհէմ, ապա նրանից պէտք է գանձել հենց այդ գումարը, իսկ ով հնարատրութիւն ունի միայն 24 դիրհէմ վճարել, ապա նրանից պէտք է գանձել հենց այդքան: Եւ, [վերջապէս] 12 դիրհէմ կը գանձուի ձեռքով աշխատող [գործատրից]*»⁹:

Ժ. դարակէսի պատմիչ Մովսէս Դասխուրանցին *Պատմութիւն Աղուանից Աշխարհի* երկասիրութիւնում յայտնում է, թէ հայոց 174ի ձմռանը (այսինքն՝ 725-726ի ձմռանը) Արմինիյայում երկրորդ մարդահամարը անցկացուեց¹⁰: Միեւնոյն ժամանակ պէտք է խոստովանել, որ հաւանական է՝ մենք երբեւէ չենք կարողանալու վերականգնել Ումայեանների օրօք, Ը. դարի առաջին կէսին, Արմինիյայում հաւաքուող հարկային գումարների չափը, ինչպէս նաեւ նրա բնահարկի չափը: Բանն այն է, որ մեր ձեռքի տակ չկան այդ ժամանակաշրջանում անցկացուած երկու մարդահամարների պաշտօնական տուեալները:

Աւելին՝ արաբ աշխարհագիր Կուդամայի (մահ. 930/40ականներ) վկայությամբ, «դիւան ալ-խարաջ»ը (ديوان الخراج, հողահարկի՝ ֆինանսահարկային գործակալության իմաստով), միւս գործակալութիւնների հետ մէկտեղ հիջրայի 183ին (799/800) խոովութիւնների հետեւանքով այրուել էր, իսկ 204ը (819/20) առաջին տարին է, երբ ֆինանսահարկային հաշուետուութիւնները խալիֆական դիւաններում պահպանուել են¹¹: Ուստի խալիֆայութեան առանձին վիլայէթների, այդ թւում Արմինիայի, պետական եկամուտների հաշուետուութիւններով բոլոր գրանցումները մինչեւ նշուած տարեթիւը անվերականգնելի են:

Փոխարէնը, սակայն, մեր ձեռքի տակ հարկերի չափերին վերաբերող շատ նիւթեր կան, որոնք առաջին Աբբասեանների (750-1258) կառավարման ժամանակաշրջանով են թուագրուում: Դրանք թոյլ են տալիս պնդել, թէ երբ այս արքայատոհմը 750ին հաստատուեց խալիֆայութիւնում, Արմինիայում հարկային դրոյքաչափերի աճի միտում նկատուեց: Դրոյքաչափի աճը հասաւ իր գագաթնակէտին Հարուն Ալ-Ռաշիդ խալիֆայի (786-809) օրօք: Դրա վառ վկայութիւնն է նրա իշխանութեան տարիներին Արմինիայից գանձուող բնահարկի ու տուրքերի ամբողջական ցուցակը: Այն պահպանուել է արաբ պատմիչ Ալ-Ջահիզիարիի (մահ. 942ին) *كتاب الوزراء والكتّاب* (Վեզիրների ու գրողների մասին գիրք)ում¹²:

Ալ-Ջահիզիարիի հարկացուցակում յատուկ ուշադրութեան է արժանի պետական երկու հարկատեսակների յստակ նշուած հանրագումարը «...13 *հազ. հազ. (այսինքն՝ միլիոն - ԱՇ.) դիրհէմ,...*»: Իրանցի պատմափորձ Ալ-Տաբարիի (838-923) վկայությամբ, Հարուն Ալ-Ռաշիդի օրօք համամահմեդական կայսրութեան պետական եկամուտների ընդհանուր ծաւալը տարեկան հասնում էր «530,312 հազար դիրհէմ»ի¹³: Մտացում է, որ Արմինիյա նահանգը այդ տարիներին ապահովում էր խալիֆայութեան գանձարան հարկային մուտքագրումների գրեթէ 2,5%ը:

Արեւելագիտութիւնում յայտնի է այդ հեղինակաւոր Աբբասեան գահակալի օրօք ո՛չ միայն խալիֆայութեան պետական եկամուտների ընդհանուր ծաւալը, այլեւ գերտէրութեան բնակչութեան մօտաւոր թուաքանակը, որը տատանում էր 70-80 միլիոն մարդու սահմաններում¹⁴:

Արմինիայի, որտեղ բնակչութեան ճնշող հատուածը ի տարբերութիւն խալիֆայութեան միւս բոլոր նահանգների չնայած կենտրոնական իշխանութիւնների ջանքերին շարունակում էր դաւանել ոչ-մահմեդական կրօնը¹⁵, ամբողջ *ջիզիան* Հարուն Ալ-Ռաշիդի օրօք պէտք է տարեկան կազմէր մօտ 9,000,000: Բանն այն է, որ, ըստ մէկ այլ արաբագիր աշխարհագրական գրականութեան հիմնադիր Իբն Խուրդաձիբիի (մօտ. 820-912/3) *كتاب المسالك والمعالم* (Ճանապարհների ու թագաւորութիւնների գրք)ին Արմինիայի *խարաջը* կազմում էր «4000 հազ. դիրհէմ»¹⁶:

Ալ-Տաբարին պնդում է, թե *ջիզհան* Արմինիայում նրա նուաճման սկզբնական շրջանում կազմում էր մեկ դինար իւրաքանչիւր ընտանիքից¹⁷։ Եւս մեկ արաբագիր պատմիչի՝ Ալ-Բալաձուրիի (մահ. 892ին) *كتاب فتح البلدان* (Երկրների նուաճումների գիրք)ի «Արմինիայի նուաճումը» գլխում յատուկ նշումա՞ծ է. «գլխահարկի չափը փոքրացնելու պատրուակով դուր [հարկատուներդ] չէր կարող մի քանի ընտանիքներ միատրել, ինչպէս եւ մենք [հարկահաւաքներս] չենք կարող դրա չափը աւելացնելու պատրուակով մասնատել դրանք»¹⁸։

Միւսնոյն ժամանակ Կեդծ Դիոնիսիոս Թէլ-Մահարցու վերոյիշեալ հատումածից իմացանք, որ Աբդ Ալ-Մալիքի բարեփոխումներից յետոյ արաբական իշխանութիւնները սկսեցին *ջիզհան* գանձել գլխից, «մինչդէտ արքաներն տուրքերը հողից էին գանձում, այլ ո՛չ թէ գլխից...»։ Եթէ այդ *ջիզհան* այլադասանների շրջանակում, ինչպէս որ Աբու Եւսուֆն էր պնդում, վճարում էին միայն աշխատունակ տղամարդիկ 48ից մինչեւ 12 դիրհէմի սահմաններում, որը, կոպիտ հաշուարկով նոյն մեկ դինարն էր, ապա ստացում է, որ նրա դրոյքաչափը Աբբասեանների օրօք չվերանայուեց։

Առողջ հասարակութիւնում, ինչպէս յայտնի է, աշխատունակ, այն է՝ 15-60 տարեկան, մարդկանց տարիքային խումբը միջինը պէտք է որ կազմի 67%, իսկ դրա տղամարդկանց հատումա՞ծը, համապատասխանաբար՝ մօտ 33,5% կամ էլ բնակչութեան ընդհանուր թուի 1/3րդը։ Հաշուի առնելով, որ *ջիզհան* (9,000,000 դիրհէմ) հիմնականում քրիստոնէանէրով բնակեցուած Արմինիայից հաւաքում էր իւրաքանչիւր գործունակ տղամարդուց 1 դինարի (=20 դիրհէմ) չափով, նրանց թիւը նահանգում ստացում է 450,000։ Ուստի, Արմինիայի բնակչութեան ընդհանուր թուաքանակը, առնուա՞զն նրա գերակշռող քրիստոնէայ մեծամասնութեան, Հարուն Ալ-Ռաշիդի օրօք կարող էր հասնել մինչեւ 1,500,000 մարդու։ Այս թուաքանակի մեջ մտնում էին նաեւ հոգեւորականները, հաշմանդամներն ու գործազուրկները, ուլքեր, ինչպէս յիշեցինք, օգտւում էին հարկային անձեռնմխելիութիւնից։ Այս թիւը կազմում է Հարուն Ալ-Ռաշիդի օրօք Արաբական Խալիֆայութեան ընդհանուր բնակչութեան մօտ 2%ը։

Մեզ մնում է որոշել Արմինիայի բոլոր երեք վարչական միատրների բնակչութեան մօտաւոր թուաքանակը։ Դա հնարաւոր է դառնում 886ին Արմինիայ Նահանգի իրաւաբանական վերացումից յետոյ նրա տարածքում կազմաւորուած հարկուող ենթակաների ու կառավարիչների ամբողջական ցուցակի շնորհիւ¹⁹։

Այդ հարկացուցակը, գումարների նշումներով, հիջրայի 344 (955/6)ի դրութեամբ պահպանուել է արաբ աշխարհագիր Իբն Հաուկալի *كتاب المسالك والممالك* (Ճանապարհների ու թագաւորութիւնների գրք)ում։ Հեղինակը

հենց այդ տարիներին անձամբ ճանապարհորդում էր Հայկական Լեռնաշխարհի ու Հարավային Կովկասի նորաստեղծ պետութիւններով²⁰։ Ահա այդ հարկացուցակը.-

1) Շարունշահերի/Շիրունշահերի Թագաւորութիւն (ամիրայութիւն)՝ 1,000,000 դիրհէմ.

2) Շաքքի (Շաքի/Շաքէ), այն է՝ Աղուանից Բագրատունիների Թագաւորութիւնը ըստ կողմերի համաձայնութեան.

3) Առ-Ռուր՝ (Փառիսոս²¹)՝ 300,000 դիրհէմ + ընծաներ (հաւանաբար՝ 50,000 դիրհէմի չափով).

4) Ջուրգ(ան), այն է՝ Վրաց Բագրատունիների Թագաւորութիւնը՝ 200,000 դիրհէմ.

5) Վայձուր (Վայոց Ձոր)՝ 50,000 դինար (հաւանական է, սակայն, դիրհէմ²²) + ընծաներ (հաւանաբար՝ 50,000 դիրհէմի չափով).

6) Ալ-Ջայղան (Խայզան)՝ 400,000 դիրհէմ + 300,000 դիրհէմի (միանուագ) տուգանք.

7) Բանու Ալ-Դայրանի (/Գրիգոր-/Դերենիկ /Արծրունու/ որդիներ), այն է՝ Վասպուրականի Թագաւորութիւնը՝ 100,000 դիրհէմ.

8) Բանու Սանբաթ (Սմբատ Ա.ի որդիներ) «Ներքին Արմինիայից» (աւելի ճիշտ՝ «Ներքին Հայքից»)²³, այն է՝ Հայ Բագրատունիների Թագաւորութիւնը՝ 2,000,000 դիրհէմ, որից միանուագ գեղջում էր 200,000.

9) Խաջին (Խաչեն)՝ 100,000 դիրհէմ + 50,000 դիրհէմի ընծաներ:

Առանց միանուագ արտօնութիւնների ու տուգանքային պատժամիջոցների, ընդհանուր գումարը ստացում է 4,150,000 դիրհէմ + ընծաներ (հաւանաբար՝ 150,000 դիրհէմի) + Շաքի/Շաքէի կառավարիչի հետ համաձայնեցրած որոշ գումար, որը, ենթադրաբար, կազմում էր 100,000 դիրհէմ:

Իբն Հաուկալի հարկացուցակի գիտական արժէքը նաեւ այն է որ թոյլ է տալիս որոշել Արմինիյա Ա.ի (պայմանական Հայքի, որն աշխարհագրի մօտ «Ներքին Արմինիյա» էր կոչում), Արմինիյա Բ.ի (Առանի) ու Արմինիյա Գ.ի (Ջուրգանի) մօտաւոր մասնաբաժինները Արմինիյա Նահանգի պետական հարկերի ընդհանուր ծաւալում, եւ, համապատասխանաբար, նրանց մօտաւոր մասնաբաժինները բնակչութեան ընդհանուր թուաքանակի ծաւալում: Գումարելով այն երկու գումարները, որոնք մուծում էին արաբական իշխանութեան պայմաններում Արմինիյա Ա.ն կազմող, այն է այդպէս կոչուած «Ներքին Արմինիյա» (առանց տրամադրուելիք նրան միանուագ արտօնութեան) ու Վասպուրական, տարածքների կառավարիչները, մենք ստանում ենք 2,100,000 դիրհէմ, ինչը կազմում է Արմինիյայի պետական հարկերի ընդհանուր ծաւալի մօտ կէտը: Հետեւաբար, Արմինիյա Ա.ի մասնաբաժինը ամբողջ Արմինիյայի

բնակչության ծաւալում նույնպէս կարող էր կազմել կէսը, ինչը հաւասար էր շուրջ 750,000 մարդու: Արմինիյա Գ.ի, այն է Ջուրգանի, կառավարիչը մուծում էր 200,000 դիրհէմ, ինչը կազմում էր Արմինիյայի պետական հարկերի ընդհանուր ծաւալի մօտ 1/20-րդը: Հետեւեալաբար, Ջուրգանի մասնաբաժինը ամբողջ Արմինիյայի բնակչութեան ծաւալում նույնպէս կարող էր կազմել 1/20-րդը, ինչը հաւասար էր ոչ աւելի քան 100,000 մարդու: Արմինիյա Նահանգի մէկուկէս միլիոնանոց բնակչութեան մնացած 650,000 պէտք է բնակուէին Արմինիյա Բ.ում, այսինքն՝ Առանում:

Չի բացառում, որ Արմինիյայի երեք վարչական միաւորների բնակչութեան թուաքանակի այսպիսի յարաբերակցութիւնը սոյն նահանգի գոյութեան ողջ ընթացքում, այդ թում չարուն Ալ-Ռաշիդ խալիֆայի գահակալման տարիներին, եղել է անփոփոխ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Այս հետազոտութիւնը կարելի դարձաւ Սանկտ Պետերբուրգի Համալսարանի տրամադրած դրամաշնորհով, որը կրում է 5.38.283.2014 համարը:

² Մանրամասն տե՛ս՝ Arsen Shahinyan, "Sistema Administrativnogo Deleniya I Oopravleniya Arabskogo Khalifata V Armenii I Arminiya (Արաբական խալիֆայութեան վարչական բաժանման եւ կառավարման համակարգը Հայաստանում եւ Արմինիյայում), *Vestnik Moskovskogo Ooniversiteta, ser. 13, Vostokovedenie*, 2008, № 3, էջ 68-85. նաեւ՝ Արսէն Շահինեան, «Արմինիյա Արաբական Նահանգի Սահմաններն Ու Վարչատարածքային Բաժանումը Ըստ Արաբագիր Սկզբնաղբիւրների», *Հայկագեան Հայագիտական Հանդէս, Հտր. L.*, Պէյրութ, 2010, էջ 319-328:

³ Առանի ու Վարջանի մարզպանութիւնների տարածքներն ու մակերեսները տե՛ս՝ Սուրէն Երեմեան, *Հայաստանը Ըստ «Աշխարհացոյց»-ի (Փորձ VII Դարի Հայկական Քարտեզի Վերակազմութեան Ժամանակակից Քարտեզագրական Հիմքի Վրայ)*, Երեւան, Հայկ. ՍՍՌ ԳԱ Պատմութեան Ինստ., 1963, յաւելում Բ, էջ 119-120:

⁴ Պետական միւս հարկատեսակներն էին՝ հողահարկի եւս մի տեսակ, սակայն արտօնեալ պայմաններով. *տասանորդը* (عشر), որը կիրառում էր հիմնականում Արաբիայում, *զաքաթը* (زكاة), բառացիորէն՝ ողորմութիւն) եւ *խումասն* (خمس, բառացիորէն՝ հնգամաս): Եթէ վերջինիս կիրառումը Արմինիյայում հնարաւոր էր միայն հակակառավարական զինուած ելոյթների արդիւնքում, քանի որ դա այն աւարի հնգամասն էր կազմում, որը մահմեդականները բռնագրաւում էին «անհաւատների»ից սրբազան պատերազմի (جهاد) ժամանակ, ապա *զաքաթը* զանձում էր բացառապէս մահմեդական բնակչութիւնից (տե՛ս՝ Ilya Petrushevskiy, *Islam V Irane V VII-XV vv.* (Իսլամը Իրանում Է.ՎԵ. դարերում): Kurs Lektsiy, 2-e izd. Sankt-Peterburg, Izd-vo Sankt-Petersburgskogo universiteta, 2007, էջ 173-174), որոնց թիւը Արմինիյայում մեծամասնութիւն երբեք չի կազմել:

⁵ Նոյն:

- 6 Չարլայիս բարեփոխումների մասին տե՛ս՝ August Müller, *Istoriya Islama* (Per. s Nem. A. Müllera, Իսլամի պատմություն, թարգ. գերմաներենից Ա. Միլլեր), I. 2-e izd., Moskva, OOO «Izd-vo Astrel»: OOO «Izd-vo ACT», 2004, էջ 558-559. Խաե՛ Philip Hitti, *History of the Arabs, from the Earliest Times to the Present*, 7th ed., London, Macmillan, 1960, էջ 218-220. Խաե՛ Գեորգ Աստարճեան, *Ընդարձակ, Ընդհանուր Արաբական Պատմություն* (2500 Ն.Ք-1918), Էլքրոթ, Տպ. «Մեւան», 1961, էջ 185-187, Խաե՛ Oleg Bolshakov, *Istoria Khalifata* (Խալիֆայություն պատմություն), I-III, Moskva, Izdatelkaia firma “Vostochnaia literatura” RAN, 1989-1998, էջ 280-281:
- 7 *ժամանակագրությունում սելեկեան 1003 (691/2)ի տակ կարդում ենք. «Արդ էլ-Մալիքը կատարեց փոփոխություն, այսինքն՝ հարկ դրեց... Նա հաստատեց մի խիստ օրենք, որի համաձայն [հպատակներին] մամե՛ն որ պետք է վերադառնար իր երկիր, իր ծննդավայր՝ հաշունառելու այնտեղ իր ու իր հօր անունը, իր խաղողի ու ձիթապտուղի այգիները. իր գոյքն ու իր որդիներին էւ այն մամե՛ն, ինչ իրեն էր պատկանում: Ահա այսպէս ծնունդ առաւ գլխահարկը... Մինչդեռ արքաներն տուրքերը հողից էին գանձում, այլ ո՛չ՝ թէ՛ գլխից... Դա առաջին մարդասիւմարն էր արաբների կողմից անցկացրած»* (*Chronique de Denys de Tell-Mahrre*, publié et trad. par J. Chabot, Paris, Librairie Emile Bouillon, Editeur 67, 1895, էջ 10-11, 10):
- 8 ٨٨٤ \ ١٣٠٢, بولاق، كتاب الخراج، أبو يوسف - Abu Yusuf, *Kitab Al-Kharaj*, Bulaq, 1302 A.H./1884 A.D., էջ 70:
- 9 Նոյն, էջ 69:
- 10 Մկրտիչ Էմին, *Մովսէսի Կադանկատուացոյ Պատմություն Աղուանից Աշխարհի, Մոսկուա, Տպ. Լազարեան Ճեմարանի Արեւելեան Լեզուաց, 1860, էջ 258:*
- 11 Դրա մասին տե՛ս՝ المكتبة الجغرافية العربية - Bibliotheca Geographorum Arabicorum (BGA), ed. M. de Goeje, VI (*Excerpta e Kitab Al-Kharadj Auctore Kodama Ibn Djafar*), Lugduni Batavorum, 1889, էջ 236: Հմմտ. Խաե՛ մեկ այլ արաբագիր գիտնական, Ալ-Եակուբիի (մահ. 897ին) տեղեկությունների հետ المكتبة الجغرافية العربية - BGA, ed. M. de Goeje, VII (*Kitab Al-Boldan Auctore Ahmed Ibn Abi Jakub Ibn Wadhiih Al-Kitab Al-Jaqubi*), Lugduni Batavorum, 1892, էջ 272:
- 12 «...13 հազ. հազ. (այսինքն՝ միլիոն - ԱՇ) դիրիմ, մահֆուրա գորգեր՝ 20 հատ, գունակարող գործուածքներն՝ 580 կտոր, աղած մշակուած ձուկ (*աս-տուրմախի* - ԱՇ)՝ 10 հազ. ոսթը, տառելի՝ 10 հազ. ոսթը, բազենար՝ 30 հատ, ջորիներ՝ 200 հատ» (١٩٣٨ - الجغيتارى، كتاب الوزراء والكتاب، تحقيق مصطفى السقا وآخرين: القاهرة، مطبعة البابي الحلبي، 1938) - Ալ-Ջահ-շիարի, Վեզիրների ու գրողների մասին գիրք, հրատ. Մուստաֆա Ալ-Մակա, Գահիրե, Տպ. «Ալ-Բաքի Ալ-Հալաքի», 1938, էջ 287):
- 13 *Annales Quos Scriptis Abu Djafar Mohammed Ibn Djarir At-Tabari, cum aliis ed. M. de Goeje, series I-III, Lugduni Batavorum, 1879-1901, III, էջ 764:*
- 14 Տե՛ս՝ *Istoriya Vostoka V Shesti Tomakh* (Արեւելքի պատմություն), T. II: *Vostok V Srednie Veka* (Արեւելքը միջին դարերում), Մոսկուա, Izdatelkaia firma “Vostochnaia literatura” RAN, 1995, էջ 122:

- ¹⁵ Դրա մասին մանրամասն տե՛ս՝ Արսէն Շահինեան, «Արաբական Խալիֆայութեան Ազգային (Միգրացիոն) Եւ Կրօնական Քաղաքականութիւնը Հայաստանում Եւ Արմինիայում», *Էքզիսթիս*, 2007, Ժ., էջ 24-38. նաեւ Arsen Shahinyan, "Formirovanie Novoy Etnicheskoy I Konfessionalnoy Karty Armyanskogo I Ujno-Kavkazskogo Nagoriy Pri Arabakh" (Արաբների օրօք Հայկական եւ Հարաւ-Կովկասեան լեռնաշխարհների նոր էթնիկ ու դաւանանքային քարտեզի ձեւաւորումը), *Vestnik Sankt-Peterburgskogo Ooniversiteta, ser. 2, Istoriya*, 2012, vip. 2, էջ 57-64:
- ¹⁶ Տե՛ս՝ المكتبة الجغرافية العربية - BGA, ed. M. de Goeje, VI (*Liber Viarum et Regnorum, Auctore Ibn Khordadbeh*), Lugduni Batavorum, 1889, էջ 124:
- ¹⁷ *At-Tabari*, III, էջ 2506 եւ 2670:
- ¹⁸ كتاب فتوح البلدان تأليف الإمام أبي العباس أحمد بن يحيى البلاذري - Liber Expugnationis Regionum Auctore Imamo Ahmed Ibn Jahja Ibn Djabir Al-Beladsori, ed. M. de Goeje, Lugduni Batavorum, 1866, էջ 201:
- ¹⁹ 886ին Արաբական Խալիֆայութիւնը պաշտօնապէս ճանաչեց Բագրատունիների Մեծ Հայքի Թագաւորութիւնը: Վրաց եւ Աղուանից Բագրատունիները վերականգնեցին նաեւ Վիրքի ու Աղուանքի պետականութիւնները (Արսէն Շահինեան, «Հայոց Վերջին Կայսրութեան Տնունըը Արաբական Գերիշխանութեան Պայմաններում», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԲ*, Պէյրութ, 2012, էջ 165-183. նաեւ Arsen Shahinyan, "Genezis Derjavy Armyanskikh Bagratidov V Oosloviyakh Arabskoy Vlasti (Արաբական գերիշխանութեան պայմաններում Հայ Բագրատունիների գերտէրութեան ձեւաւորումը), *Vestnik Sankt-Peterburgskogo Ooniversiteta, ser. 2, Istoriya*, 2013, vip. 1, էջ 66-76):
- ²⁰ Տե՛ս՝ المكتبة الجغرافية العربية - BGA, ed. M. de Goeje, II (*Viae Et Regna, Auctore Ibn Hauqal*), Lugduni Batavorum, 1873, էջ 254-55:
- ²¹ (Ալ-Ռուֆ) տեղանունը նոյնացնել չի յաջողում: Միեւնոյն ժամանակ Իբն Հաուկալը յիշատակում է նրա կառավարիչին՝ Սանհարիբ Իբն Սաւադա ա-նունով: Ըստ յայտնի բրիտանցի կովկասագէտ Մինորսկոյ՝ սա Փառիսոսի արքայ Յովհաննէս Սենեբերիմն է (958-1003) (Vladimir Minorsky, "Caucasica IV (II. The Caucasian Vassals of Marzuban in 344/955)", *Bulletin of the School of Oriental (& African) Studies*, University of London, 1953, vol. 15, part 3, էջ 522-523):
- ²² Համեմատելով յարակից ենթակաների համար հաստատուած հարկաչափերը՝ մենք համոզուած ենք, որ խօսքն այստեղ 50,000 դիրհէմի մասին է:
- ²³ Արաբերէն քննգրում գրուած է. «أرمينية الداخلية»: Իբն Հաուկալը նրա խոշորագոյն քաղաքների շարքում նշում է Դաբիլը (Դուին), Նաշաւանը (Նախճաւան) ու Կալիկալան (Կարին) (BGA, p. II, էջ 245):

AN ESTIMATION OF THE POPULATION FIGURES OF THE
WILAYAT OF ARMINIYA AND ITS ADMINISTRATIVE UNITS
(SUMMARY)

ARSEN K. SHAHINYAN
a_shaginyan@mail.ru

In this article the author tries to estimate the population figures in the lands of the Armenian Highlands and the Southern Caucasus, which were administratively united by the Arab Caliphate under the name *Wilayat of Arminiya* in the 8th and 9th centuries.

The author notes that from among the five basic taxes of the Caliphate only two were widely applied in Arminiya: the *Kharaj* and the *Jizya*, of which eventually only the *Jizya* tax prevailed. The author explains that *Wilayat of Arminiya* consisted of three parts: Arminiya I (Greater Armenia proper with certain exclusions), Arminiya II (Arran, i.e. Albania) and Arminiya III (Jurzan, i.e. Eastern Georgia).

The first census in the Caliphate was conducted in 725-726, but a historian of the time confirms that the documents of what was considered to be the finance office of the Caliphate were burnt to ashes in 799-800. Accordingly, the author finds it almost impossible to reconstruct the taxing data of the 8th century Caliphate.

The author, notes, however, that the 819-820 Caliphate tax accounts have been preserved, and this enable researchers to reconstruct the taxing data of the Caliphate in *Wilayat Arminiya*.

Based on various hints and information collected from several historians and geographers of the 9th and 10th centuries, including Abu Yusuf, Al-Baladzuri, Ibn Hawkal, Al-Jahšīri, Ibn Khurdadzbih, Al-Kudama, Al-Tabari and Al-Jaqubi, the author reconstructs the Caliphate taxing system of the Christian areas in *Wilayat Arminiya* and argues that it was a stable and almost constant system. Finally, the author delves into a reconstruction of the amount taxed from *Wilayat Arminiya* and, by calculating the amount of taxes collected from each capable working male, he estimates that *Wilayat Arminiya* had a population of around 1.5 million. Of these, Arminiya I had about 750,000 inhabitants, Arminiya II about 650,000 and Arminiya III about 100,000.

